

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(10)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(10)

ԵՐԵՎԱՆ 2022

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ*

Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ.*, *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
Հարություն Մարության, *պ. գ. դ.*
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ.*, *պրոֆեսոր*
Հռիփսիմե Պիկիչյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*
Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*
Համո Սուքիասյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*)
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*)
Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ Բրիտանիա*)

ISSN 1829-0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արման Նալբանդյան

ՇԻԿԱՀՈՂԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 8

Կարեն Թոխաթյան

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՑԱԽ ԵՎ ՍՅՈՒՆԻՔ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ
ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ 18

Նժդեհ Երանյան, Համլետ Պետրոսյան

ՏՈՂԻ ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 31

Варданесова Татьяна

КОЛЛЕКЦИЯ СРЕДНЕВЕКОВОГО СТЕКЛА
ИЗ РАСКОПОК Г. ТИГРАНАКЕРТ В АРЦАХЕ 41

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գոռ Ղազարյան

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ 1920 – 1921 ԹԹ. 46

Մայա Գրիգորյան

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ
20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 58

Միրանույշ Առաքելյան

ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ
«СБОРНИК МАТЕРИАЛОВ ДЛЯ ОПИСАНИЯ МЕСТНОСТЕЙ И ПЛЕМЕН
КАВКАЗА» (СМОМПК 1881-1915) ՌՈՒՍԱԼԵԶՈՒ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԷՋԵՐՈՒՄ 68

Վանիկ Վիրաբյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ 1920 Թ.
ԱՊՐԻԼԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ
ԳՈՐԾՈՂ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 77

Միհեր Քումունց

ՂՈՒԿԱՍ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ «ԴԱՎԻԹ ԲԵԿ ԿԱՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՂԱՓԱՆՑՈՑ»-Ի ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 93

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վեռա Բոյան
ՍՅՈՒՆԻՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ
(ԸՍՏ ԴՐԱՄԱԿԱՆ ԳԱՆՁԵՐԻ) 108

ԱՂԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լիլիա Ավանեսյան
ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԻ ՆՄՈՒՇՆԵՐ
(19-ՐԴ–20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 118

Կարինե Բազեյան
ԱՐՑԱԽԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋ 129

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անուշ Սաֆարյան
ԱՐՑԱԽԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 138

Նարինե Շամամյան
ՌԱԶՄԱՊԱՐԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ
(ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ) 145

Արմինե Շահբազյան
ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՍՅՈՒՆԻՔԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԿԻՆՈԱՐՎԵՍՏՈՒՄ 155

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մեդա Գալստյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ 168

Համլետ Պետրոսյան
ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ 183

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ 189

Լիլիա Ավանեսյան
Պատմական գիտությունների թեկնածու

Հայաստանի պատմության թանգարան
lilia.a65@mail.ru

ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԻ ՆՄՈՒՇՆԵՐ (19-ՐԴ–20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)*

Հիմնաբառեր. ժողովրդական տարազ, կտոր, շապիկ, վերնազգեստ, գոտի, գլխի հարդարանք, ոտնաման:

Հայաստանի պատմության թանգարանի Ազգագրության բաժնի (N 1 պահոցի) հայկական ժողովրդական տարազի արժեքավոր հավաքածուում առանձին խումբ են կազմում Սյունիք-Արցախի ավանդական հագուստի համալիրները (Պողոսյան, Ստեփանյան 2006, 129–132): Սրանց մեջ շքեղությամբ և պատմական նշանակությամբ առանձնահատուկ տեղ են գրավում Շուշիի կանանց և տղամարդկանց հագուստները, որոնց բաղկացուցիչ մասերն են ներքնազգեստները, շապիկները, վարտիքները, վերնազգեստները, գոտիները, զարդերը, գլխի հարդարանքը, ոտնամանները (Ավագյան 1983, 43–46, 65–66, 73, 78, 90)[1]: Արցախի լեռնագոտու հայերի հագուստի տեսակները և ձևվածքն ընդհանրություններ ունեն և նման են Սյունիքի ու Գողթնի կանանց և տղամարդկանց հագուստներին: Արցախի՝ մասնավորապես Շուշիի գավառի, կանացի զգեստների որոշ տեսակներ գոյատևել են մինչև 20-րդ դ. երկրորդ կեսը՝ տարեց կանանց շրջանում: Տղամարդկանց ավանդական հագուստը 20-րդ դ. սկզբից սկսում է դուրս գալ կենցաղից: Դա պայմանավորված էր շուշեցի տղամարդկանց ակտիվ կենսակերպով և Արցախի սահմաններից ավանդույթի ուժով այլ քաղաքներ գնալու սովորույթով (Тер-Саркисянц 2015, 629):

Ինչպես նշում են հայկական ժողովրդական տարազի ուսումնասիրողներ ազգագրագետներ Ն. Ավագյանը և Ս. Պողոսյանը գոյություն ուներ հագուստի երկու համալիր՝ «**հայավարի**» և «**քաղքավարի**» (նկ. 1, նկ. 2) (Ավագյան 1983, 43: Պողոսյան 1992, 32–33): «Հայավարի»-ն Արցախին հատուկ ավանդական հագուստն էր,

* Ստացվել է 13.08.2022թ., ուղարկվել է գրախոսման 02.09.2022թ., ընդունվել է տպագրության 18.11.2022թ.:

1 Հայկական ժողովրդական տարազի ուսումնասիրման գործում նշանակալի ներդրում ունի ազգագրագետ Նազիկ Ավագյանը: Շուշիի ժողովրդական տարազի նմուշները ներկայացված են ըստ Ն. Ավագյանի «Հայկական ժողովրդական տարազը (XIX դար–XX դարի սկիզբ)» աշխատության: Սույն հոդվածում ներառել ենք Շուշիի ժողովրդական տարազի ձևվածքի, օգտագործված կարերի տեսակները, հագուստի զարդարման եղանակները, որոնք տեղ են գտել Ն. Ավագյանի աշխատությունում:

«քաղքավարի»-ն՝ Երևանի և Թիֆլիսի հայ կանանց հագուստի որոշ մասերի ընդօրինակված տարբերակը:

Շուշիի «հայավարի» ժողովրդական տարազը

ԿԱՆԱՆՑ ՀԱԳՈՒՍՏ

1. Շապիկ «հալավ»

Սպիտակ կտավե շապիկից բացի, վրայից հագնում էին կարմիր կտավից կամ մետաքսյա կտորից կարված շապիկը: Թևքերը լայն էին և ուղիղ՝ 45–56 սմ երկարությամբ: Քղանցքը և թևքաբերանը ծալում էին նեղ շերտով: Պարանոցի և կրծքի բացվածքը զարդարում էին 2 սմ լայնություն ունեցող սև գույնի թավշյա ժապավենով: Եզրին կարվում էր արծաթե մանր զարդախողովակների շարան: Երկրորդ տարբերակում ետևի մասը կարվում էր երկու տարբեր տեսակի կտորներից՝ վերևը՝ կտավից, ներքևը՝ սատինից: Մասերը միացվում էին կարաշարով: Հարսանեկան կամ տոնական շապիկը կարվում էր կարմիր մետաքսե կտորից (Ավագյան 1983, 43):

2. Վարտիք

Վարտիքը կարվում էր մետաքսյա կամ բամբակյա կարմիր կտորից՝ սպիտակ կտավե աստառով, փողքերը՝ լայն կտորից, վերևի մասում դեպի ներս ծալած և կարած շերտի մեջ հագցվում էր սպիտակ, բամբակյա թելով հյուսված ժապավենը, որով վարտիքը հավաքվում և կապվում էր գոտկատեղին: Այս տարբերակը տարածված էր Գորիսում, Սիսիանում, Մարտակերտի, Մարտունու, Հադրութի շրջաններում: Երկրորդ տարբերակի նեղ փողքաբերանին կարվում էր սև մահուդե, թավշյա կամ մետաքսյա կտոր (փղկաքող), իսկ նրա եզրին կարվում էր ասեղնագործ վերադիր ժանյակ, որը երևում էր շապիկի տակից (Ավագյան 1983, 44):

3. Վերնազգեստ «արխալուղ» («իրեքփշկանի», «խըլըղ»)

Վերնազգեստը բաղկացած էր երեք հատվածներից՝ փեշկերից: Այն կարում էին մուգ կանաչ, ծաղկանախշերով, ինչպես նաև կապույտ և մանուշակագույն մետաքսյա կտորներից: Կարելու համար պահանջվում էր 54–60 սմ լայնությամբ և 350–400 սմ երկարությամբ կտոր, նույնքան էլ բամբակյա կտոր՝ աստառի համար, և 100 սմ կարմիր մետաքսյա կամ բամբակյա կտոր՝ եզրերը զարդարելու համար: Տոնական վերնազգեստի զարդերիզը կարվում էր մետաքսից, ամենօրյա վերնազգեստինը՝ բամբակյա կտորից: Յուրաքանչյուր կին ուներ աշխատանքային և տոնական վերնազգեստներ: Վերնազգեստի բամբակե աստառը, ներդիրն ու երեսը կարվում էին միասին՝ շուլալակարով, երկայնակի զուգահեռ գծերով:

Տարածված էին վերնազգեստի չորս տարբերակներ, որոնք զանազանվում էին ձևվածքով, թևքերի երկարությամբ և զարդարման եղանակներով:

ա) Սրածայր թևքաբերանով վերնազգեստի եզրերին եռանկյունաձև շարվում էին արծաթե խողովակաձև զարդերը: Թևքի ճեղքը զարդարվում էր արծաթե սնամեջ գնդաձև զարդերով (Արցախում՝ «բոժոժ»):

բ) Արցախում տարածված երկրորդ տարբերակն ուներ ուղիղ թևքաբերան-

ներ, անութներում կային ճեղքեր՝ թևերն ազատ շարժելու և չքրտնելու նպատակով: Կողքերին կարում էին մեկական ներսի գրպան:

գ) Երրորդ տեսակը տարածված էր Շուշիում, կարում էին կանաչ մետաքսից: Զևվածքը նման էր ա, բ. տարբերակներին: Ուներ կրկնակի թևքեր, որոնցից երկուսը «զարդաթևքեր» էին՝ երկար և սրածայր, մինչև անութները ճեղքերով: Օգտագործվող թևքերն ուղիղ էին՝ մետաքսյա ծաղկազարդ, կարմիր կտորից: Օգտագործվող թևքաբերաններին եռանկյունաձև դասավորությամբ արծաթյա խոռոչակաշար էր կարվում: Վերնազգեստի եզրերը զարդարում էին սև թավշյա ժապավենով, որի վրա ոսկեթելով ասեղնագործվում էին բուսական և երկրաչափական նախշեր: Թավշե ժապավենը կարմիր, կանաչ, սպիտակ մետաքսե երիզներ ուներ՝ երբեմն կրողի անվան սկզբնատառերով:

դ) Չորրորդ տարբերակը հագնում էին աղջիկները՝ 20-րդ դ. սկզբից: Զևվածքը նման էր առաջին երկուսին (ա, բ), բայց ավելի կարճ էր, հասնում էր կոնքերից քիչ ներքև: Այն տարածված էր Շուշիում:

Զմռանը Արցախում և Սյունիքում կրում էին տարբեր երկարության հինգ տեսակի վերնազգեստ՝ «արխալուղ» (Ավագյան 1983, 44–46):

4. Գոտի

ա) Գոտին պատրաստում էին 50 սմ լայնությամբ և 350 սմ երկարությամբ բամբակե կամ մետաքսյա կտորներից: Այն երկու անգամ փաթաթում էին վերնազգեստի վրայից, հանգուցում առջևից և ծայրերը մտցնում էին տակը: Հարգի էր Գիլանից բերված գոտին, որը կանայք հինգ անգամ էին փաթաթում մեջքին:

բ) Կաշվե գոտուն ամրացվում էին փորագրությամբ, սևադապատ նախշերով և զուգաթելի եղանակով պատրաստված արծաթե վերադիր զարդեր:

գ) Կային արծաթաթելով կամ ոսկեթելերով հյուսված, արծնապատ կոճակգամերով ամրակայված և արծնապատ ճարմանդով թանկարժեք գոտիներ (Ավագյան 1983, 46): ՀՊԹ-ի գոտիների հավաքածուում առանձնակի տեղ ունեն Շուշիի ոսկերիչների կողմից պատրաստված գոտիները՝ ՀՊԹ, Ա 6434 , ՀՊԹ, Ա 7775–106 (նկ. 5):

19-րդ դարի երկրորդ կեսին–20-րդ դարի սկզբին Շուշիում աշխատում էին շուրջ 155 հայ ոսկերիչներ ու արծաթագործներ, որոնց թվում էին հայտնի վարպետներ Ավանեսյան Ավետիքը, Ավանեսյան Համբարձումը, Օգանեսով Ջաքարը, Ահարոնյան Առաքելը, Բաղամյան Գրիգորը, Բաղամյան Մնացականը, Գրիգորյանց Կարապետը, Նաջարյանց Ավանեսը, Նաջարյանց Սարգիսը և այլք (Аствацатурян 1977, 227–254): Ոսկե և արծաթե արծնապատ գոտիների լավագույն վարպետներից էր Գրիգոր Բաղամյանը կամ ինչպես նրան անվանում էին՝ «Ուստա Բաղամը»

5. Վերարկու «քուլք»

ա) Վերարկուն կարվում էր մուգ կարմիր թավշից կամ բրդյա կտորից, բամբակյա ներդիրով և աստառով: Վրայից երկայնքով զուգահեռ գծեր էին շուլալակարում: Զևվածքը վերնազգեստի նման էր: Թևքերը կարճ էին՝ հազիվ արմունկներին հասնող, եզրերը զարդարում էին կանաչ մետաքսե շերտով և աղվեսի մոր-

թով: Կողքի ճեղքերի վերևում, պարանոցի մոտ, աջ ու ձախ փեղկերի եզրերին մորթու զարդաշերտ կար: Մորթու ամենալայն շերտը կարվում էր թևքաբերաններին:

բ) Երկրորդ տեսակի վերարկուն կարվում էր բրդյա կտորից՝ առանց մորթու զարդերիզի: Այն տարածված էր նաև Գողթնում (Ավագյան 1983, 46–47):

6. Գլխի հարդարանք

Կոպին թավշե կամ բամբակե հասարակ կտորով պատված շրջանակ էր՝ կոշտ միջուկով: Գլխին ամուր պահելու նպատակով վրայից սպիտակ կտավ էր կապվում, որն առջևից չէր ծածկում այն: Կոպիի ներքևի եզրին կապվում էր ճակատազարդ-դրամաշարը: Շարանի մեջտեղում արծաթե կամ ոսկե խոշոր դրամ-միջանոց էր տեղադրվում (նկ. 6ա) (Ավագյան 1983, 73):

Քունքազարդն արծաթե սնամեջ գնդիկների՝ «պուժուժների» (բոժոժ) շարան էր, յուրաքանչյուր կողմից 6–9 հատ: Այդ շարանն ամրացվում էր կանաչ մետաքսե կամ կարմիր թավշյա կտորից կարված եռանկյունաձև ականջակալի՝ «ընջուկատեղի» վրա: Դրվում էր ականջների վրա, մի ծայրի կապիչների միջոցով կապվում էր գագաթին, իսկ մյուս ծայրի կապիչներով՝ ծնոտի տակ (նկ. 6 բ) (Ավագյան 1983, 73):

Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուում կան ոսկեթել ասեղնագործությամբ և արծաթե գնդիկներով հարդարված՝ Արցախի և Սյունիքի կանանց տարբեր ճակատնոցներ ու ականջակալներ (Պողոսյան 2022, 335–352): Սրանցից են Շուշիում պատրաստված և այնտեղ էլ օգտագործված ոսկեթել հյուսվածքով արևապատկերներով հարդարված հարսանեկան ճակատնոցը (ՀՊԹ, Ա 9368–33) և արծաթե «բոժոժներով» զարդարված ականջակալները (ՀՊԹ, Ա 9368-34): Հայտնի է, որ դրանք պատրաստվել են 19-րդ դարի երկրորդ կեսին և կրել են շուշեցի Օհանյան (Օգանով) ընտանիքի հարսները: Վերջին կրողը Գենեֆիա Ավագիմի Աղաջանյան-Օգանովան էր, որից էլ ՀՊԹ ազգագրության բաժնի աշխատակիցները գիտարշավի ժամանակ դրանք ձեռք են բերել Ստեփանակերտում 1974թ.:

Գլխաշորը քառանկյունաձև է, եզրերը՝ երկու կողմից ծոպերով: Այն ծալում էին երկտակ, շեղակի և այդ դիրքով կապում էին ու վրայից ամրացնում կեռազարդերը: Վերջինները քունքերի մոտից ձգվում էին դեպի գագաթը, փոքր հատվածներով իրար խաչաձևվելուց հետո ամրացվում գլխաշորին: Կեռազարդերը պատրաստում էին զուգաթելի, հատիկազարդման, սևադազարդման, փորագրության և այլ եղանակներով:

Գլխաշորը հավատքի հետ կապվող նվիրական առարկա էր համարվում: Սրբավայրերն այցելող կանայք, աղջիկները գլխաշոր էին նվիրաբերում՝ որպես ծածկոց սուրբ գրքի, սեղանի, խորանի (Ավագյան 1983, 73):

7. Ոտնաման

Արցախի քոշերը «չմոշկներ» էին կոչվում (նկ. 7): 19-րդ դարի կեսից լայն տարածում էր ստացել ասիական «քոշերի» գործածությունը: Քոշեր կարելու համար օգտագործում էին եռոտանի հաստոցը: Կանանց ոտնամանը կանաչ գույնի էր,

ծայրը՝ սուր, դեպի վեր թեքված: Նորահարսի կամ երիտասարդ կանանց կարմիր չմոշկն ասեղնագործվում էր ոսկեթելով (Դավթյան 1972, 29, LXXVIII-4: Ավագյան 1983, 90):

20-րդ դ. սկզբին չմոշկն աստիճանաբար վերացավ և փոխարինվեց սև կամ շագանակագույն չստերով կամ ձմեռային փակ կոշիկներով, որոնք կոշկաթելի միջոցով ամրացվում էին ոտքին:

«Մաշիկ» կոչվող ոտնամանի ետևի մասը բաց էր, քիթը՝ սուր, 3 սմ բարձրությամբ կրունկով, որը պայտում էին: Կաշին կանաչ էր կամ կարմիր: Տարեց կանանց մաշիկները սև էին: Մաշիկ էին հագնում նաև աղջիկները (Ավագյան 1983, 90):

19-րդ դարի վերջին գործածության մեջ է մտնում «տուֆլի» ոտնամանը՝ 2 սմ բարձրությամբ կրունկով, թաթի սև կաշվե երեսին՝ կապիչներով: Տուֆլին տոնական էր և ընդունված՝ ունևոր ընտանիքներում: Տուֆլիի մյուս տեսակն ավելի փակ էր, ոտքին ամրանում էր կողքի երեք կոճակով, գործածվում էր Թիֆլիսում, Երևանում, Շուշիում, Ագուլիսում և այլն: 1930-ական թվականներին Հայաստանի բոլոր շրջաններում տարածվեց գործարանում արտադրվող տուֆլին:

19-րդ դարի կեսից Հայաստանի տարբեր շրջաններում, այդ թվում՝ Սյունիք-Արցախում գործածության մեջ մտան չստի ձև ունեցող, «յամանի», «կոնդուռա» կոչված ոտնամանները: 19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին այստեղ, ինչպես պատմազգագրական այլ շրջաններում, հանդիպում են բաղնիքի փայտե ոտնամանի երկու տեսակ՝ չստիկի ձև ունեցող, փայտե ներբանով, կաշվե երեսով նալիկ և կաշվե կապով, փայտե ներբանով նալիկ (Ավագյան 1983, 90):

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱԳՈՒՍՏ

1. Շապիկ

Շապիկը կարվում էր սպիտակ կտավից կամ չթից: Պարանոցի բացվածքը կրծքի աջակողմյան բացվածքի հետ միասին կոճկվում էր անրակի մոտ՝ մեկ կոճակով: Թևքերն ուղիղ էին և լայն՝ եռանկյունաձև անութակտորներով (Ավագյան 1983, 65):

2. Վարտիք և անդրավարտիք

Վարտիքը կարվում էր սպիտակ կտավից:

20-րդ դարի սկզբին բրդյա կոշտ հյուսվածքով կտոր էին գործում Արցախի որոշ գյուղերում, օրինակ՝ Ճարտարում, որից էլ կարում էին խոնջանավոր անդրավարտիքը: Արցախում այն ամենուրեք ուներ միատեսակ ձևվածք (Ավագյան 1983, 65):

3. Վերնազգեստ «արխալուղ»

«Արխալուղ» կոչվող վերնազգեստը կարում էին բրդյա կամ բամբակյա սև կտորից: Տարեց տղամարդկանց վերնազգեստը հասնում էր մինչև ծնկների տակը, իսկ երիտասարդներինը՝ ծնկներից վեր: Երիտասարդների վերնազգեստը կոճկվում էր ամբողջ կրծքամասում՝ վերևից մինչև գոտկատեղ՝ սև երիզից պատրաստված օղակ-կոճակներով: Կարողության տեր յուրաքանչյուր տղամարդ ունենում էր 2 – 3 «արխալուղ» (Ավագյան 1983, 65: Погосян 2003, 227 – 231):

4. Գոտի

ա) Կաշվե գոտին կապում էին վերնազգեստի վրայից: Այն ուներ արծաթե ճարմանդ և բուսական նախշերով վերադիր ուռուցիկ զարդամասեր՝ պատրաստված սևադի, փորագրության, արծնապատման (էմալապատման) եղանակներով :

բ) Արծաթե գոտին երիտասարդները նվեր էին ստանում ամուսնության օրը՝ հարսնացուի ծնողներից (Ավագյան 1983, 65–66):

5. Տաք վերնազգեստ «չուխա»

ա) Չուխան կարում էին սև կամ մուգ կապույտ ընտիր շալից (բրդյա կտորից): Աջ ու ձախ փեղկերն ուղիղ էին և կոճկվում էին երեք օղակ-կոճակով: Թիկնամասը կարվում էր չորս քառանկյունաձև կտորից: Գոտկատեղում ներքևի մասը հավաքվում էր շարով և ներսի կարով միանում վերևի մասին: Օձիքը կանգուն էր: Թևքաբերանը ճեղքով էր՝ առանց անութակտորի:

բ) Երկրորդ տարբերակը կարում էին սև մահուդից՝ երկար թևքերով: Թևատակն առանց կարի էր, թևքաբերանը՝ սրածայր: Երբեմն ձախ թևքը ձգում էին ձախ ուսին, որպեսզի շքեղ կարված արխալուղ-վերնազգեստի թևքը երևար: Վերարկուի եզրերին կարում էին սև մետաքսաթելից հյուսված երիզ: Չուխայի այս տարբերակը տարածված էր նաև Գողթնում:

Փեսայի հարսանեկան չուխան կարվում էր կարմիր մահուդից: Այս հագուստը Արցախի որոշ գյուղերում և Գորիսում մասամբ պահպանվել է մինչև 20-րդ դարի առաջին կեսը (Ավագյան 1983, 66):

Ուշագրավ է Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուում գտնվող՝ սև մահուդից կարված, երկար սրածայր թևքաբերաններով վերնազգեստը, որի առջևի փեղկի ներսի սպիտակ կտորի վրա կա Երվանդ Լալայանի ձեռագրով տեղեկություն այն մասին, որ վերնազգեստը պատկանել է շուշեցի Միքայել Արամյանին, որն էլ այն հանձնել է Հայոց ազգագրական ընկերությանը (նկ. 8)[2]:

6. Գլխի հարդարանք

Գառան մորթուց կարված գլխարկները Շուշիում կարում էին Բուխարայի, Շիրազի և տեղական ցեղերի ոչխարի մորթուց: Տարեց տղամարդիկ կրում էին կոնաձև երկար գլխարկ, որը կշռում էր 2,5 կգ: Երիտասարդների և երեխաների գլխարկները թեթև էին, շրջանաձև գագաթով, որն անվանում էին «ղարաբաղյան ձևի» (Ավագյան 1983, 78–79):

---

2 Միքայել Արամյանց (մայիսի 4, 1843, գ. Քյաթուկ, Շուշիի գավառ–1923, Թիֆլիս): 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբի հայ նշանավոր նավթարդյունաբերող, բարերար, Թիֆլիսի «Ազգային բարեգործական ընկերության» հիմնադիր: Ալեքսանդր Մանթաշյանի մտերիմ ընկեր ու գործընկեր: Ալ. Մանթաշյանի հետ Բաքվում զբաղվում էր նավթարդյունաբերությամբ և առաջիններից էր, որ իր կապիտալի մեծ մասը տեղափոխեց Բաքու՝ նավթը երկաթուղով (ցիստեռնաներով) տեղափոխելու համար: Եղել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի մշտական հոգաբարձուն ու հովանավորը: Աջակցել է Թիֆլիսի նշանավոր «Արամյանցի հիվանդանոցի» (ներկայումս Թբիլիսիի թիվ 1 կլինիկական հիվանդանոց) կառուցմանը՝ նվիրաբերելով հարյուր հազար ռուբլի: Մ. Արամյանցի անվան հետ է կապված նաև Թբիլիսիի ներկայիս «Մարիոտ» հյուրանոցը, որը նա կառուցել է իր նավի՝ «Մաժեստիկի» նմանությամբ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ապաստաններ է կառուցել հայ գաղթականների համար:

7. Ոտնաման

Ոտնամաններից այստեղ տարածված էր երեք քթանի տրեխը: Այն բրդյա թելով հյուսված «տրխատանով» էր. սովորաբար հյուսվում էր կապույտ բրդյա թելով և թաթի երեսին զուգահեռ գծերով հագցվում տրեխի եզրերի կաշվե օղերի մեջ: Նորափեսայի տրեխը հյուսվում էր կարմիր բրդյա թելով, որը նվիրում էին հարսի ծնողները՝ հարսանիքի օրը: Ամենաընդունված տեսակը թաթի երեսը կաշվե թելով ծածկված տրեխն էր:

Տղամարդիկ կրում էին կաշվե կոշիկներ, այդ թվում՝ ճտքավոր:

20-րդ դ. սկզբին Արցախում կոշիկներից հարգի էր «Ադելխանովի կոշիկ» ոտնամանը (Ավագյան 1983, 89–90):

▪▪▪

Շուշեցիների ժողովրդական տարազը 20-րդ դարի սկզբին կարում էին, հիմնականում, տեղում գործող ջուլհականոց արհեստանոցներում արտադրված կտորներից: Մեզ են հասել 1909 թ. ապրիլի 3-ից 5-ը Թիֆլիսում տեղի ունեցած Տնայնագործական համագումարի նյութերը, որտեղ ապրիլի 4-ին Շուշիի ջուլհականոց-դպրոցի վարչությունը ներկայացնում է կատարած աշխատանքների հաշվետվությունը:

Շուշիի ջուլհականոց-արհեստանոցը բացվել է 1906 թ. հուլիսի 12-ին: Շուշիում, ինչպես և Գանձակում, տիկին Օհանյանի ցուցումներով, բացվեց ջուլհակային բաժին, որտեղ աշխատանքով ապահովվեցին 1905 թ. թաթարական ջարդերից մազապուրծ եղած աղջիկ երեխաները և այրիները: Հմուտ վարպետների ղեկավարությամբ զարգացավ ոչ միայն գորգագործությունը, այլև՝ մետաքսագործությունը: Այստեղ արտադրում էին սրբիչներ, սփոռոցներ, վարագույրներ, գոգնոցներ, անձեռոցիկներ, վերմակի երեսներ, գոտիներ, ջեջիմներ, կտավ և տեղական թելից՝ բրդյա կտորներ (Տնայնագործական 1909, 119):

1908 թվականի հունվարից արհեստանոցում սկսվում է մետաքսե գործվածքների արտադրությունը: Մետաքսե կտորները գործում էին տեղական թելից, տեղական ոստայնի վրա: Կտորից պատրաստում էին նաև վերմակի երեսներ, գոտիներ, ջեջիմներ և այլն (Տնայնագործական 1909, 119):

Նոր Նախիջևանում հրատարակվող «Լույս» պարբերականը 1912 թ. բարձր է գնահատել Շուշիում գործող արհեստանոց-դպրոցի աշխատանքները («Լույս» 1912, 7), իսկ Թիֆլիսում լույս տեսնող «Նոր հոսանք» պարբերականը 1914 թ. նշում է, որ Շուշիի ջուլհականոց-դպրոցի վարչությունը և քաղաքային արհեստավորաց ու առևտրա-արդյունաբերական դասը մեծ դեր են խաղացել արհեստների զարգացման գործում: «…Շուշին բերդ էր, նա նկատվում է որպես մետաքսագործության, կտավագործության և կաշեգործության ծաղկած կենտրոն, — գրում է պարբերականը — նրա մեջ կային 42 մետաքսագործարաններ, որոնք 1829 արտադրել էին 14 հազարից ավելի կտորներ և թաշկինակներ, զբաղեցնում էին 132 ոստանների վրա 324 ջուլհակ և բանվոր, կային 28 կտավագործներ՝ 80 ոստանով և 8 հազար կտորի արտադրողությամբ, 20 կաշվե գործարաններ: Շուշին ուներ մետաքսագործարաններ, կտավագործարաններ: Շուշիի առևտուրը, արհեստը, արդյու-

նաբերությունը տեղական կարիքների պարապմունքներ էին» («Նոր Հոսանք» 1914, 1173):

Նշանավոր ազգագրագետ Ստեփան Լիսիցյանը Շուշիի զարգացման տնտեսական հիմքը համարում է մերձկասպյան անասնապահների դեպի հայկական ալպիական արոտավայրեր շարժվելու գլխավոր ճանապարհին տեղակայված լինելու հանգամանքը: Հեղինակը նկատում է, որ առանց ժամանակի կորստի անասնապահները կարող էին փոխանակել անասնապահական մթերքը՝ պանիրը, կարագը, բուրդը, կաշին արհեստակցական արտադրանքի առարկաների՝ օրորոցների, սնդուկների, բահերի, սանդերքների, գլխարկների, սանրերի, տեղական գլխաշորերի և ծածկոցների, պայտերի, մեխերի, մետաղից պատրաստված բազմաթիվ իրերի և այլնի հետ (Лисицян 1992, 69):

Շուշիում արհեստների զարգացման մասին խոսելիս՝ Վ. Աբրահամյանը հաղորդում է, որ փաստաթղթերի համաձայն 1823թ. Շուշիում եղել են 41 տեսակ արհեստների ճյուղեր, որտեղ ընդգրկված են եղել 262 արհեստավորներ: Յուրաքանչյուր արհեստի ճյուղում աշխատել են հիմնականում 1–10 արհեստավոր (Աբրահամյան 1971, 96–97):

Ժողովրդական տարազի արտադրության հետ ուղղակիորեն կապված էին մի շարք արհեստներ, որոնց մասին հաղորդել է մեկ այլ ականավոր ազգագրագետ Երվանդ Լալայանը: Շուշիի և Շուշի գավառի արհեստավոր վարպետների և նրանց աշակերտների թվի վերաբերյալ աղյուսակում նա ներկայացրել է դերձակների, գլխարկ կարողների, կոշկակարների և կաշեգործների մասին կարևոր և արժեքավոր տեղեկություններ (Լալայեան 1898, 97): Այդ տվյալների համաձայն, Շուշիում 1895 թ. աշխատում էր 80 տղամարդ դերձակ՝ 62 աշակերտով, 1 կին դերձակ՝ 1 օգնական բանվորով, իսկ Շուշիի գավառում՝ 12 դերձակ՝ 7 աշակերտով:

Շուշիի կանանց տարազի համալիրում ընդունված էին և հարգի էին տեղական մետաքսից պատրաստված վերնազգեստը, գլխաշորերը: Շուշիի գավառում գլխավոր արհեստներից էր շերամապահությունը: Լալայանի հաղորդմամբ գավառի բոժոժը մի ժամանակ եղել է իտալական դեղին տեսակից: Շերամապահները ոտքի չարխով թել էին մանում և տեղացի վաճառականների միջոցով արտահանում արտասահմանյան երկրներ (Լալայեան 1898, 91): Այնուհետև, Եր. Լալայանը խոսում է, թե ինչպես 1870-ական թվականներին Շուշիի գավառ են գալիս ֆրանսիացիներ, որոնք սերմ են հանում տեղական բոժոժից, իսկ արտասահմանյան հիվանդոտ սերմը բերում՝ տարածում գավառում: Այդպիսով, հիվանդանում է սերմի օգտագործվող տեսակը և տեղի տալիս ուրիշ տեսակներին:

Մեծ ձեռքբերումներից էր շուշեցի վաճառականների կողմից արտասահմանից մանարան և մետաքս ոլորող մեքենա բերելը և տեղում ընդօրինակելը: Բերվում է նաև Ցելլիուսի եղանակով պատրաստված առողջ սերմ, որից հետո շերամապահությունը Շուշիում և Շուշիի գավառում նորից է զարգանում (Լալայեան 1898, 91): Գավառապետի տեղեկությունների համաձայն, Շուշիի գավառում 1895 թ. ստացվել է 9.000 փութ բոժոժ, որից 4.300 փութ բոժոժ ուղարկվել է արտասահման (Լալայեան 1898, 92): Բերդաքաղաք Շուշին դառնում է հարուստ և բարգավաճ, դա էլ իր հերթին դրսևորվում է քաղաքաբնակ շուշեցիների հագուստի վրա:

Բրդից ու մետաքսից պատրաստված գործվածքների արտադրությունը սերտ կապեր ուներ Շուշիի ներկատների աշխատանքի հետ: Ըստ Եր. Լալայանի, 1895 Շուշիում աշխատում էր 10 ներկարար վարպետ՝ պոյաճի՝ 2 բանվորով, 8 աշակերտներով (Լալայեան 1898, 97):

Իրավամբ՝ 19-րդ դ.–20-րդ դ. սկզբին Շուշին առևտրի, արհեստագործության ու հայկական մշակույթի խոշոր կենտրոնն էր, որին տվել էին «Կովկասի Փարիզ» անունը (Հակոբյան 1998, 162): Այսպիսով, Շուշի քաղաքի և Շուշի գավառի հումքի, արհեստավորների՝ թել մանողների, ջուլհակների, ներկարարների, կաշեգործների, մորթի մշակողների, ոսկերիչների ու արծաթագործների, դերձակների, կոշկակարների և այլոց շնորհիվ 19-րդ դ.–20-րդ դարասկզբին ձևավորվում է շուշեցիներին հատուկ գեղեցիկ դիմագիծը, որը բազմիցս ամրագրվել է հայ և օտար լուսանկարիչների կողմից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թանգարանային առարկաներ

ՀՊԹ, Ա 0224,
ՀՊԹ, Ա 0253
ՀՊԹ, Ա 1011
ՀՊԹ, Ա 2271ա, բ
ՀՊԹ, Ա 2194
ՀՊԹ, Ա 6434
ՀՊԹ, Ա 7775-106
ՀՊԹ, Ա 851, 8430-2
ՀՊԹ, Ա 9368-33
ՀՊԹ, Ա 9368-34

Պարբերական մամուլ

ԼՈՒՅՍ 1912–«Լույս», Նոր Նախիջևան, 1912, 34:

ՆՈՐ ՀՈՍԱՆՔ 1914–«Նոր Հոսանք», Թիֆլիս, 1914:

Գրականություն

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1971–Աբրահամյան Վ., Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18–20-րդ դարի սկիզբը), Երևան 1971:

ԱՎԱԳՅԱՆ 1983–Ավագյան Ն., Հայկական ժողովրդական տարազը (XIX դ.–XX դ. սկիզբ), Երևան, 1983:

ԴԱՎԹՅԱՆ 1972–Դավթյան Ս., Հայկական ասեղնագործություն, Երևան, 1972: ԼԱԼԱՅԵԱՆ 1898–Լալայեան Ե., Վարանդա, Նիութեր ապագա ուսումնասիրութեան համար, արտատպված «Ազգագրական հանդիսից», Թիֆլիս, 1898:

ՀԱԿՈԲՅԱՆ 1998–Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հ. 4, Երևան, 1998:

ՊՈՂՈՍՅԱՆ 1992–Պողոսյան Ս., Արցախի ավանդութային տարազը (19-րդ դ. վերջ–20-րդ դ.) Արցախ, Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր, Երևան, 1992:

ՊՈՂՈՍՅԱՆ, ՍՏԵՓԱՆՅԱՆ 2006–Պողոսյան Ս., Ստեփանյան Ա., Սյունիք-Արցախի տարազը հայոց ավանդական տարազախմբի համակարգում, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անցյալը, ներկան և ապագան», Միջազգային գիտաժողովի զեկ. հիմնադրույթներ, Երևան, 2006:

ՊՈՂՈՍՅԱՆ 2022–Պողոսյան Ս., Արցախի կանանց ավանդական տարազի գեղա-

զարդման առանձնահատկություններ, Արցախի պետական համալսարանի «Գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2022:

ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ 1909 – Տնայնագործական համագումար (3, 4, 5 ապրիլի 1909), Թիֆլիս, 1909:

АСТВАЦАТУРЯН 1977 – Аствацатурян Э., История оружейного и серебряного производства на Кавказе в XIX – начале XX в., Дагестан и Закавказье, Часть II, Москва, 1977.

ЛИСИЦЯН 1992 – Лисицян Ст., Армяне Нагорного Карабаха, Ереван, 1992.

ПОГОСЯН 2003 – Погосян С., Восточноармянский мужской костюм в общекавказском комплексе традиционной одежды, «Археология, этнография и фольклористика Кавказа», Материалы международной конференции 17 – 18 ноября, Ереван, 2003.

ТЕР-САРКИСЯНЦ 2015 – Тер-Саркисянц А., Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции, Москва, 2015.

Lilia Avanesyan
Ph. D in History

History Museum of Armein
lilia.a65@mail.ru

SAMPLES OF THE ARMENIAN FOLK COSTUME OF SHUSHI (19th-early 20th centuries)

Keywords: folk costume, textile, shirt, outerwear, belt, headwear, footwear.

Samples of the folk costume of the Armenians of Shushi of the 19th – early 20th centuries have a special place in the collection of ethnographic objects of the History Museum of Armenia. The national clothes of the Armenians of Shushi belong to the Eastern Armenian complex of the folk traditional costume – they were made from woollen, silk and cotton fabrics of handicraft production. Expensive cotton and silk fabrics were imported. Clothes were made by the women. Since the late 19th century, in Artsakh-Karabakh clothes (primarily men's) were ordered from tailors who lived in Shushi, as well as in the villages of Chartar, Mets Tagher (Mets Taghlar).

Women's traditional costume of Shushi consisted of a red shirt "halav", cotton and silk pantaloons, outerwear "arkhalugh" and "kulk", a belt, a headdress (forehead adornment "kopi", temple adornments, kerchief, footwear "chmoshk", "mashik", shoes.

Men's traditional clothes consisted of a shirt, underpants and trousers, outerwear "arkhalugh" and "chukha", a belt, a headwear (fur hat), shoes.

Лилия Аванесян
Кандидат исторических наук

Музей истории Армении
lilia.a65@mail.ru

ОБРАЗЦЫ АРМЯНСКОГО НАРОДНОГО КОСТЮМА ШУШИ (19 в. – нач. 20 в.)

Ключевые слова: Народный костюм, ткани, рубашка, верхняя одежда, пояс, головной убор, обувь.

В коллекции этнографических предметов Музея истории Армении особое место занимают образцы народного костюма армян Шуши 19 – нач. 20 вв. Национальная

одежда армян Шуши относится к восточно-армянскому комплексу народного традиционного костюма-изготовлялась из шерстяных, шелковых и хлопчатобумажных тканей кустарного производства. Дорогие хлопчатобумажные и шелковые ткани импортировались. Шитьем одежды занимались женщины. С конца 19-ого века в Арцах-Карабахе одежду (в первую очередь мужскую) заказывали у портных, которые жили в Шуши, а также в селах Чартар, Мец Тагер (Мец Таглар).

Женский традиционный костюм Шуши состоял из красной рубашки «(h)алав», из хлопчатобумажных и шелковых панталонов, верхней одежды «архалух» и«кулк», пояса, головного убора (налобное украшение «копи», височные украшения, головное покрывало), обуви «чмошк»,«машик», туфлей.

Мужская традиционная одежда состояла из рубашки, кальсонов и брюк, верхней одежды «архалух» и«чуха», пояса, головного убора (меховая шапка), обуви.

Լիլիա Ավանեսյան

Շուշիի հայկական ժողովրդական տարազի նմուշները (19 - 20-րդ դարի սկիզբ)

Նկ.1. Շուշեցի աղջիկ, 1915թ., (Լուսանկարիչ՝ Դ. Երմակով) ՀՊԹ, Ա 0224

Նկ.2. Շուշեցի հայուհիներ, 20-րդ դարի սկիզբ, ՀՊԹ, Ա 0253

Նկ.3. Վերնազգեստ աղջկա, Շուշի, 19-րդ դարի վերջ, մետաքս, արծաթ, ՀՊԹ, Ա 2194

Նկ. 4. Վերնազգեստ, Շուշի, 19-րդ դար, Մետրաքս, ՀՊԹ, Ա 851, 8430-2

Նկ. 5, Գոտի, Շուշի, 19-րդ դարի երկրորդ կես, ոսկեթել հյուսվածք, արծաթ, արծն, 156 գր., Ոսկերիչ՝ Գրիգոր Բաղամյան, ՀՊԹ, Ա 6434

Նկ. 6ա. Ճակատնոց, Շուշի, 19-րդ դարի երկրորդ կես, բամբակ, ոսկեթել, արծաթե դրամներ, ՀՊԹ, Ա 9368 - 33

Նկ. 6բ. Ականջակալ, Շուշի, 19-րդ դարի երկրորդ կես, Բամբակ, ոսկեթել, արծաթ, ՀՊԹ, Ա 9368 - 34

Նկ. 7. Կոշիկ «Չմոշկ», Արցախ, 18-րդ դարի վերջ - 19-րդ դարի սկիզբ, Թավիշ, կաշի, ոսկեթել, երկաթ, ՀՊԹ Ա 2271ա, բ

Նկ. 8. Տղամարդու վերնազգեստ «Չոխա», Շուշի, 19-րդ դարի երկրորդ կես, մահուդ, ՀՊԹ Ա 1011